ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***28.12.2016 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 86-ը:

Մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը և բաժինների վարիչները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2016 թվականի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2016 թվականի 4-րդ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:
   /Զեկ. Ալբերտ Աղեկյան – մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ/

3. Այլ հարցեր:

Հայտարարություններով հանդես եկան՝

Յուրա Մուշեղյանը - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Վարդուհի Մնացականյանը - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2016 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ուղղությամբ՝ մինչև տարեվերջ սեփական եկամուտների ցուցանիշները 100օ/օ ապահովելու համար.

2) աշխատանքներ տանել աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ.

3) 2017 թվականի համայնքային բյուջեների կազմման գործընթացը ավարտել սահմանված ժամկետում և հետևել, որ դրանք լինեն իրատեսական.

4) սահմանված ժամկետում վերացնել վարչական հսկողության արդյունքում գրանցված թերությունները և այսուհետ դրանք բացառելու նպատակով համագործակցել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ մեթոդական աջակցություն ստանալու համար.

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ